ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ՄԱԾՁԲ-22/2

ք.Երևան **«31» հունվար 2022թ.**

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գ.Մուրադյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայկական Ծրագրեր» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Խաչատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևանի քաղաքապետարանի կարիքների համար «ՀԾ-ձեռնարկության համակարգ»-ի 44 լիցենզիայի սպասարկման և Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում համակարգի ներդրման ծառայությունների ձեռքբերման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ :

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1), ինչպես նաև՝ մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Պատվիրատուն Կատարողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 15 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Ծառայությունը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 3.2-րդ կետի «ա)» ենթակետում նշված փաստաթղթերը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է ***17917800 (տասնյոթ միլիոն ինը հարյուր տասնյոթ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որը կազմում է 2986300 (երկու միլիոն ինը հարյուր ութսունվեց հազար երեք հարյուր) ՀՀ դրամ:***

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի քաղաքապետարանի ֆինանսական վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան	«Հայկական Ծրագրեր» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	ք. Երևան, Չարենցի 1
Կենտրոնական գանձապետարան	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900012410016	Հ/Հ 1930030005130100
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 00807555
Գ. Մուրադյան _____	Ա.Խաչատրյան _____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«31» հունվար 2022թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-22/2
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

չ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Ծառայության անվանումը	մատուցման	
							հասցեն	ժամկետը**
1	48441300/1	1. **Հաշվապահություն, հիմնական միջոցներ,պահեստ** Ծրագիրը պետք է ապահովի՝ • Դրամական միջոցների հաշվառում • Բանկային փաստաթղթերի համակցում ԻնտերնետԲանկ համակարգի հետ • Մատակարարների տվյալների ավտոմատ ներբեռնում ըստ մուտքագրված ՀՎՀՀ-ի և անվանման (առանց ֆայլերի փոխանակման) • Հայտատուների /նյութական պատասխանատուների/ հաշվառում՝ ըստ հայտերի, կառուցվածքային ստորաբաժանումների և հայտերի բավարարման	դրամ	3493800	1	«ՀԾ- Ձեռնարկության համակարգ»-ի (9 /ինը/ աշխատատեղի համար) սպասարկում- Երևանի քաղաքապետարան (8 լիցենզիա)	ք. Երևան Արգիշտիի 1	Կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ մինչև 2022թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ
2	48441300/2	• ժամանակացույցի • Մատակարարների հաշվառում՝ ըստ պայմանագրերի, հաշիվ/ապրանքագրերի և վճարման ժամանակացույցի • Բազմակողմ ֆինանսական վերլուծություն • Ֆինանսական պլանավորում • Ֆինանսական և հարկային հաշվետվությունների պատրաստում • Գործողությունների ամբողջական աուդիտ • Հիմնական միջոցների քարտարանի հաշվառում • Հիմնական միջոցների հետ բոլոր գործարքների գրանցում՝ ձեռքբերումից մինչև լուծարում • Մաշվածության հաշվարկ • Կապիտալ և ընթացիկ վերանորոգումների հաշվառում	դրամ	702000	1	«ՀԾ- Ձեռնարկության համակարգ»-ի (9 /ինը/ աշխատատեղի համար) սպասարկում- Աջափնյակ վարչական շրջան (3 լիցենզիա)	Ա. Սարգսյան փ.,5	Կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ մինչև 2022թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ

3	48441300/3	• Հիմնական միջոցների վերագնահատում, հավելյալ ծախսերի հաշվառում, գույքագրում • Հիմնական միջոցների համար գույքագրման հնարավորություն սքաների միջոցով շտրիխկոդերի հիման վրա • Ապրանքանյութական արժեքների հաշվառում պահեստներում • Ապրանքանյութական արժեքների հաշվառում պահոցներում • Ապրանքանյութական արժեքների վերագնահատում, հավելյալ ծախսերի հաշվառում, պաշարների գույքագրում • Արագամաշ առարկաների հաշվառում • Ի պահ հանձնված նյութական արժեքների հաշվառում	դրամ	702000	1	«ՀԾ- Ձեռնարկության համակարգ»-ի (9 /ինը/ աշխատատեղի համար) սպասարկում- Ավան վարչական շրջան (3 լիցենզիա)	Խուդյակովի փողոց հ. 222	Կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ մինչև 2022թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ
4	48441300/4	**2. Պատվերներ** Ծրագիրը պետք է ապահովի՝ • Ծախսային կենտրոնների, մինիմալ-մաքսիմալ պաշարների հաշվառում • Գրանցել հետևյալ գործողությունները - Պատվեր/հայտ - Պահանջագիր-տեղաշարժ - Պահանջագիր-ծախսի օրդեր - Առկա հայտագրված ապրանքների պահուստավորում/ապապահուստավորում - Պատվեր մատակարարին - Պահեստի մուտքի օրդեր պատվերի հիման վրա • Ստանալ հաշվետվություններ՝ - Պատվեր հայտերի վիճակ - Պատվեր հայտերի առաքման ենթակա ապրանքներ. - Մինիմալ քանակներից շեղումներ. - Առկա ապրանքների պահուստավորումներ - Պատվեր հայտերի և մատակարարների պատվերների կապ - Մատակարարներին պատվիրված ապրանքներ - Մատակարարի կողմից չառաքված ապրանքներ:	դրամ	702000	1	«ՀԾ- Ձեռնարկության համակարգ»-ի (9 /ինը/ աշխատատեղի համար) սպասարկում- Արաբկիր վարչական շրջան (3 լիցենզիա)	Ն. Զարյան փողոց հ. 27	Կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ մինչև 2022թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ
5	48441300/5		դրամ	702000	1	«ՀԾ- Ձեռնարկության համակարգ»-ի (9 /ինը/ աշխատատեղի համար) սպասարկում- Դավթաշեն վարչական շրջան (3 լիցենզիա)	Դավթաշենի 3-րդ թաղ	Կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ մինչև 2022թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ
6	48441300/6	**3. Աշխատավարձ** Ծրագիրը պետք է հնարավորություն ընձեռի՝ • Նկարագրել կազմակերպությունում գործող հավելումները և պահումները • Նկարագրել աշխատաժամանակի տեղեկագրերի (տաբելների) տեսակները (8 ժամյա, 4 օրյա, ժամավճար և այլն) • Կատարել դրույթների համապատասխանեցում օրենսդրությանը (եկամտային հարկի և նպատակային սոցիալական վճարի սանդղակներ, նվազագույն աշխատավարձը և այլն) • Հաստատել կադրային փաստաթղթերը • Գրանցել հետևյալ գործողությունները. - Աշխատավարձի հաշվարկ - Արձակուրդայինի հաշվարկ - Վերջնահաշվարկ (չօգտագործված արձակուրդի փոխհատուցման գումարի հաշվարկ) - Նպաստների հաշվարկ (հիվանդության նպաստ, պրոթեզավորման նպաստ, առողջարանային բուժման նպաստ, մայրության նպաստ, ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ և թաղման նպաստ) - Ամսվա ընթացքում մեկից ավելի վճարումներ	դրամ	702000	1	«ՀԾ- Ձեռնարկության համակարգ»-ի (9 /ինը/ աշխատատեղի համար) սպասարկում- Էրեբունի վարչական շրջան (3 լիցենզիա)	Սասունցի Դավթի փողոց հ. 87	Կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ մինչև 2022թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ
7	48441300/7		դրամ	702000	1	«ՀԾ- Ձեռնարկության համակարգ»-ի (9 /ինը/ աշխատատեղի համար) սպասարկում- Կենտրոն վարչական շրջան (3 լիցենզիա)	Տերյան փողոց հ.44	Կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ մինչև 2022թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ

8	48441300/8	- Կատարել ծախսերի ձևակերպումներ - Աշխատաժամանակի բաշխում • Ստանալ հաշվետվություններ՝ - Վճարացուցակներ - Վճարային տեղեկագրեր - Հաշվարկային թերթիկներ - Ամփոփ տվյալներ - Ամփոփ տվյալներ ըստ աշխատակիցների - Միջին ամսական տվյալներ - Հաշվարկային տվյալների շախմատաձև տեղեկագիր - Հաշվարկային տվյալներ՝ ըստ աշխատակիցների, ստորաբաժանումների, հավելումների/պահումների - Աշխատողի և քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայություններ մատուցողի գրանցման հայտ - Եկամտային հարկի ամփոփ հաշվարկ:	դրամ	702000	1	«ՀԾ- Ձեռնարկության համակարգ»-ի (9 /ինը/ աշխատատեղի համար) սպասարկում- Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան (3 լիցենզիա)	Սեբաստիայի փողոց h.32	Կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ մինչև 2022թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ
9	48441300/9	**4. Կադրեր** Ծրագիրը պետք է հնարավորություն ընձեռի՝ • Գրանցել աշխատակիցների անձնական տվյալները. - Ծննդյան ամսաթիվ, ծննդավայր - Սեռ, ընտանեկան վիճակ - Ընտանիքի անդամների տվյալներ (անուն, ազգանուն, ծննդյան ամսաթիվ) - Նույնականացման փաստաթղթի տեսակ, համար - Հանրային ծառայության համարանիշ - Հաշվառման և բնակության հասցեներ - Աշխատանքային գրքույկի համար - Կրթության տվյալներ (մասնագիտություն, դիպլոմի տվյալներ, գիտական կոչումներ) - Լրացուցիչ (զինապարտության վիճակ, հեռախոսահամարներ) • Գրանցել աշխատանքային պայմանագրերով սահմանված պայմանները և առաջադիմության փաստաթղթերի միջոցով հետևել դրանց	դրամ	702000	1	«ՀԾ- Ձեռնարկության համակարգ»-ի (9 /ինը/ աշխատատեղի համար) սպասարկում- Նոր Նորք վարչական շրջան (3 լիցենզիա)	Գայի պողոտա h. 19	Կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ մինչև 2022թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ
10	48441300/10		դրամ	702000	1	«ՀԾ- Ձեռնարկության համակարգ»-ի (9 /ինը/ աշխատատեղի համար) սպասարկում- Նորք-Մարաշ վարչական շրջան (3 լիցենզիա)	Ա.Արմենակյան փողոց h. 272	Կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ մինչև 2022թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ
11	48441300/11	• փոփոխություններին. - Ստորաբաժանում - Պաշտոն - Աշխատավարձի դրույքաչափ - Փորձաշրջանի ավարտ - Պայմանագրի տեսակ, պայմանագրի գործողության ժամանակահատված • Աշխատանքային տարբեր խմբերի համար սահմանել արդյունավետության ցուցանիշներ (KPI)	դրամ	702000	1	«ՀԾ- Ձեռնարկության համակարգ»-ի (9 /ինը/ աշխատատեղի համար) սպասարկում- Նուբարաշեն վարչական շրջան (3 լիցենզիա)	Նուբարաշենի 9-րդ փողոց h.	Կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ մինչև 2022թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ

12	48441300/12	• Նկարագրել կազմակերպության կառուցվածքային միավորների (ստորաբաժանումների) հիերարխիկ կառուցվածք • Գրանցել հետևյալ գործողությունները - Ընդունման հրաման - Ազատման հրաման - Աշխատանքային պայմանագրեր - Գործուղման թերթիկներ - Բացակայության փաստերի, արտաժամերի, հանգստյան և տոն օրերին աշխատած ժամերի գրանցում - Գիշերային աշխատանքի ժամերի գրանցում - Տաբելի թերթիկի (հաճախումների) հաստատում - Արձակուրդի հրամաններ և պլանավորում - Ժամանակավոր անաշխատունակության նպաստի հրաման - Հավելումների հրամաններ - Պահումների հրամաններ • Կազմակերպել մրցութային ընթացակարգը և ունենալ համալիր	դրամ	702000	1	«ՀԾ- Ձեռնարկության համակարգ»-ի (9 /ինը/ աշխատատեղի համար) սպասարկում- Շենգավիթ վարչական շրջան (3 լիցենզիա)	Գ. Նժդեհի փողոց հ. 26	Կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ մինչև 2022թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ
13	48441300/13	տեղեկատվություն մասնակիցների վերաբերյալ • Նկարագրել և հետևել հաստիքացուցակներին ըստ ստորաբաժանումների • Նկարագրել աշխատանքները և աշխատանքային պարտականությունները	դրամ	702000	1	«ՀԾ- Ձեռնարկության համակարգ»-ի (9 /ինը/ աշխատատեղի համար) սպասարկում- Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան (3 լիցենզիա)	Դ. Անհաղթի փողոց հ. 11	Կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ մինչև 2022թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ
14	48441300/14	• Նկարագրել աշխատակիցների հմտությունները, ուսուցման հետ կապված փաստերը • Գրանցել ուսուցման (վերապատրաստման) ընթացքի հետ կապված ծախսերը • Ստանալ տարատեսակ հաշվետվություններ. - Աշխատակիցների կադրային թերթիկներ - Հրամանների գիրք - Աշխատակիցների հաճախումների (տաբելների) փաստաթղթեր - Աշխատանքային առաջադիմություն - Աշխատակիցների ստաժի տվյալներ - Արձակուրդներ ըստ աշխատակիցների (ժամանակահատվածի համար հասանելի, օգտագործված և չօգտագործված օրեր) - Աշխատակիցների գործող աշխատավարձը - Աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագիր - Աշխատակիցների շրջանառություն - Աշխատանքի պահանջների և փաստացի տվյալների համեմատում • Ծրագրում առկա հաշվետվությունների գեներատորը թույլ է տալիս նկարագրել և հետագայում ավտոմատ ստանալ տարատեսակ հաշվետվություններ: • Կադրերում հաստատված աշխատակիցների հաճախումների փաստաթղթերը ավտոմատ փոխանցվում են Աշխատավարձ համակարգին և հիմք են հանդիսանում հաշվարկ կատարելու համար: • Կադրերում գրանցված փաստաթղթերի հիման վրա նկարագրվում են • տպվող տեսքեր, որոնք հետագայում ավտոմատ ստեղծվում և կցվում են աշխատակցի քարտին: **Ծրագրի ընդհանուր հնարավորություններ** Ծրագիրը պետք է ապահովի՝ 1. Իրավասությունների և դերերի նկարագրություն, հասանելիությունների սահմանափակման նկարագրություն՝ ըստ մասնաճյուղի, ըստ հաշվային պլանի հաշիվների, անալիտիկ հոդվածների, գործընկերների,	դրամ	6000000	1	Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում «ՀԾ- Ձեռնարկության համակարգ» -ի (9 /ինը/ աշխատատեղի համար)	ք.Երևան	Կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ մինչև 2022թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ

		ստորաբաժանումների, պահեստների 2. Փաստաթղթերի պատմության մանրամասն գրանցում՝ ըստ բոլոր գործողությունների 3. Փաստաթղթերի հաստատումների շղթայի նկարագրում, ավտոմատ տեղեկացում էլ. փոստով 4. Հատուկ դաշտերի ավելացման հնարավորություն փաստաթղթերում: Ավելացված դաշտերի արտացոլում հաշվետվություններում 5. Աշխատանքային ժամանակահատվածի ավտոմատ փակման կամ տեղափոխման մեխանիզմ՝ ըստ օգտագործողների 6. Անմիջապես ծրագիրց ինտեգրում b2b.armsoft համակարգի հետ (առանց ֆայլերի փոխանակման) 7. Անմիջապես ծրագրից ինտեգրում E-Invoicing համակարգի հետ (առանց ֆայլերի փոխանակման) 8. Անսահմանափակ հաշվետվությունների նկարագրման հնարավորություն Անալիտիկ և սինթետիկ հաշվառում ըստ ստորաբաժանումների						

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410016
ՀՎՀՀ 02593108

Գ. Մուրադյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Հայկական Ծրագրեր» ՍՊԸ
ք. Երևան, Չարենցի 1
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930030005130100
ՀՎՀՀ 00807555

Ա.Խաչատրյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«31» հունվար 2022թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-22/2
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1-14	48441300/1 48441300/2 48441300/3 48441300/4 48441300/5 48441300/7 48441300/8 48441300/9 48441300/10 48441300/11 48441300/12 48441300/13 48441300/14 48441300/6	«ՀԾ-ձեռնարկության համակարգ»-ի 44 լիցենզիայի սպասարկման և Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում համակարգի ներդրման ծառայությունների ձեռքբերում	-------	8979450	8979450	11958900	11958900	11958900	14938350	14938350	14938350	17917800	17917800	17917800	17917800

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410016
ՀՎՀՀ 02593108

Գ. Մուրադյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Հայկական Ծրագրեր» ՍՊԸ
ք. Երևան, Չարենցի 1
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930030005130100
ՀՎՀՀ 00807555

Ա.Խաչատրյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
«31» հունվար 2022թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-22/2
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«31» հունվար 2022թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-22/2
ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն